ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 25 » հունվարի 2022 թվականի N 03 -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ և 5-րդ կետերը, 11-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2021 թվականի տարեկան հաշվետվությանը:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2021 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների հաշվետվություններն ընդունել ի գիտություն:

4. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարին.

1) միջոցներ ձեռնարկել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների հաշվետվություններում նշված թերությունների և բացթողումների վերացման ուղղությամբ.

2) ապահովել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների հաշվետվություններով ներկայացված առաջարկությունների կատարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804 Ն. ՄԿՐՏՉՅԱՆ